«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն ՝ Կապանի թիվ 2 ՆՈՒՀ

Դաստիարակ ՝ Սվետլանա Ղազարյան

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

1.Ներածություն

2.Գլուխ 1.Ընտանիքի և մանկապարտեզի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման գործում

1.1Ընտանիքի դերն երեխայի զարգացման հարցում

1.2Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

1.3Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին

3. Գլուխ 2 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը

2.1Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը

2.2 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը

2.3 Ժողովների անցկացման ուղենիշներ

2.4 Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության հիմնական ուղիները

4. Գլուխ 3 Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

3.1 Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

3.2Խորհուրդներ ծնողներին

3.3Դիտողական նյութեր ծնողների համար

3.4Ծնողների համար խորհրդակցությունների մոտավոր թեմատիկա (1տարվա)

5.Եզրակացություն

6.Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ նա ճանաչում է ինքն իրեն և ձևավորվում որպես անհատ։ Երեխայի սոցիալականացման երկրորդ օղակը նախադպրոցական ուսումնական հաստատությունն է, որտեղ երեխան շփում է հաստատում դաստիարակների և հասակակիցների հետ։ Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման համար կարևորում է համարում մանկավարժական աշխատողի համագործակցությունը սանի ծնողի(օրինական ներկայացուցչի) հետ,որը նպաստում է ծնողի նպաստում է ծնողի անմիջական մասնակցությամբ մանկապարտեզում կրթական աշխատանքների,ինչպես նաև ընտանիքում սանի ճիշտ դաստիարակության կազմակերպմանը։

Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ մեծ է ընտանիքի և մանկապարտեզի դերը։ Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում,քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխայի ճիշտ զարգացմանը նպաստելը։ Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին։ Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից։ Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման։

Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը և թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին։ Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ լավագույնս ծառայի երեխայի շահերին։ Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության կենտրոնում երեխան է։ Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ։ Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն

ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնել հաջողության։

Մեր աշխատանքի նպատակն է մանկավարժական աշխատողի և սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների) համագործակցության տարբեր ձևերի և մեթոդների միջոցով լուծել սաների կրթական աշխատանքների կազմակերպման և հնարավորինս ներկայացնել մանկապարտեզընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում։

Գլուխ 1. Ընտանիքի և մանկապարտեզի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման հարցում

<< Երեխաները երկրի բնական ծաղիկներն են, իսկ այդ ծաղիկներն առաջին հերթին աճեցնում են ընտանիքում՝ ծնողները>>

Ա.Մ. Գորկի

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է,ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը։

<<Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը,նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները,բոլորն այն չափով,ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով,ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին>> (Ռաֆֆի)։

Յ.Ա.Կոմենսկին նշում էր,որ <<Մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր,արձակուրդ>>։ Վերջապես, <<Երեխան ընտանիքի հայելին է>> սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորություն ձևավորման գործում։Ընտանիքի գործառույթներն ու խնդիրները բազմաթիվ են։

Ընտանիքի հիմնական գործառույթներն են.

-վերարտադրողական,

-սոցիալ-տնտեսական,

-սոցիալականացման,

-հոգեթերապևտիկ,

- դաստիարակչական։

Ընտանիքի կարևորագույն գործառույթները հիմնավորում են մարդկության գոյատևման ընտանեկան ձևի առավել պաշտպանվածությունը,հետևաբար և նպատակահարմարությունը։ Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերն հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման ու զարգացման գործում։ Հոգեբան Ա.Ն.Լեոնտևը նշում է,որ <<Նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ,ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ>>։ Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ։

Ընտանեկան դաստիարակությամբ է մեծ չափով պայմանավորված երեխայի հետագա գոյություն և կենսագործունեության ներդաշնակությունը։ Ընտանեկան դաստիարակության միջոցով լուծվում են երեխայի անձնավորության կայացման մի շարք խնդիրներ։

Դրանք են.

_ստեղծվում են երեխայի լիարժեք զարգացման համար բոլոր հնարավոր պայմանները,

_ապահովվում է երեխայի հոգեբանական պաշտպանվածությունը և ձևավորվում է վստահության աշխարհի հանդեպ,

_զարգանում է երեխայի ինքնագիտակցությունը,ձեռք է բերվում սեռային պատկանելության և արժանապատվության զգացողություն,

_ձևավորվում են կյանքի հմտություններ և դրական սովորություններ,

_յուրացվում են սոցիալ-բարոյական արժեքներ, ձևավորվում է կենցաղային մշակույթ(կուլտուրա),

_փոխանցվում են և յուրացվում ընտանեկան փոխհարաբերությունների նմուշներ, ձևավորվում է ընտանիքի պահպանման և դաստիարակության որոշակի օգտակար փորձ։

Նշված խնդիրների կարևորությունը պահանջում է ընտանեկան դաստիարակության մանկավարժական մոտեցումների հստակեցում և հատուկ մշակում,ընտանեկան դաստիարակության կազմակերպման եղանակների հուշում և տարածում ծնողական միջավայրում։

Ընտանեկան դաստիարակության գործընթացն արդյունավետ է,երբ կազմակերպվում է ոչ թե կամայական եղանակներով,այլ մտածված և հետևողական մանկավարժական աշխատանքի միջոցով։

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ։Ճիշտ է,յուրաքանչյուր ընտանիք ունի դաստիարակության իր սկզբունքներն ու մոտեցումները,սակայն դրանք պետք է պարբերաբար վերանայվեն,ճշտվեն և համապատասխանեցվեն ընտանեկան դաստիարակության մանկավարժորեն ընդունելի պահանջներին։

Տ.Ա.Մարկովան երկար տարիներ ուսումնասիրելով ընտանեկան դաստիարակության առավելությունները,առանձնացնում է ընտանեկան դաստիարակության երեք այն գործոնները,որոնք բնութագրում են ընտանեկան դաստիարակության հիմնական առանձնահատկությունները։

Առաջին առանձնահատկությունը վերաբերում է ընտանեկան դաստիարակության մթնոլորտին։ Այն չափազանց հուզական է, ընկերական և մտերմիկ։Ընտանեկան դաստիարակությունն ուղեկցվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների սիրով և նվիրվածությամբ,փոխադարձ քնքշությամբ և հավատարմությամբ։Ընտանիքում առկա են անտեսանելի, ներքին հուզական կապեր,որոնք ապահովում են երեխայի անվտանգ և պաշտպանված կյանքը,ինչը երեխայի մեջ վստահություն է առաջացնում իր և աշխարհի հանդեպ։Ընտանեկան ջերմությունը երջանիկ մանկության ուղեկիցն է,ապագա ներդաշնակ կյանքի կառուցման երաշխիքը։

Ընտանեկան դաստիարակության երկրորդ առանձնահատկությունը մանկավարժական ներգործության մշտական (տևական) բնույթն է:

Երեխայի ընտանիքում դաստիարակում են միշտ նույն մեծահասակները,որոնց դաստիարակող գործողությունները կանխատեսելի են և հաշվարկելի: Նույնիսկ այն դեպքում, երբ ծնողների դաստիարակող ներգործությունը ընդունելի չէ երեխայի կողմից,այն անսպասելի չէ, հետևաբար ելք ենթադրող: Օրինակ,կարելի է կանխատեսել մայրիկի կամ հայրիկի զայրույթը և ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ներողություն խնդրել,ինքնակամ անկյուն կանգնել: Ընտանեկան դաստիարակության կայուն և մշտական բնույթը ներգործում է ինքնադաստիարակության սկզբունքով:Արդյունքում երեխան սովորում է համարժեք արձագանքել արտաքին իրողությանը:

Ընտանեկան դսատիարակության հուզական և կայուն բնույթը նպաստում է երեխայի նյարդային համարկարգի հավասարկշռությանը, հոգեկան ներդաշնակությանը և հանգիստ ու ապահով կենսակերպի ապահովմնանը:

Ընտանեկան դաստիարակության երրորդ առավելությունը երեխային՝ ընտանեկան խնդիրների լուծմանը,լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է: Երեխան,ինչպես և հայրիկը կամ մայրիկը,ընտանիքի լիարժեք անդամ է,հետևաբար ունի իրավունք մասնակցելու ընտանեկան գործունեության քննարկմանն ու լուծմանը:Նշված հնարավորությունը երեխային ոգևորում է և նրա մեջ ցանկություն առաջացնում հավասարաչափ մասնակցելու ընտանիքի բոլոր գործերին:Վաղ տարիքից սկսած երեխան ընտանիքում կարող է ունենալ մշտական պարտականությունները՝հավաքել խաղալիքները, կատարել տատիկի կամ պապիկի խնդրանքը,իսկ երեք տարեկանից նա լիովին ընդունակ է օգնելու կենցաղային տարբեր գործերում՝խնամել ծաղիկները,ջրել հողամասի ծառերը,կերակրել շնիկին և այլն:

Այսպիսով, ծնողներն են երեխային դաստիարակող առաջին մանկավարժները:Համաձայն ֆրանսիացի հանրահայտ մանկավարժ Ժ.Ժ.Ռուսոյի, յուրաքանչյուր հաջորդ դաստիարակող ունի ավելի թույլ մանկավարժական ներգործություն երեխայի դաստիարակությանը,քան նախորդը:

Ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպմանը նպաստում են մանկավարժության կողմից առանձնացված ընտանեկան դաստիարակության սկզբունքային մոտեցումները, որոնք կոչված են նպատակաուղղելու ընտանեկան դաստիարակության հաճախ տարրերային գործընթացը և շտկելու հնարավոր սխալներն ու թերությունները։

Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության ընդհանուր սկզբունքներից։

Դրանք են.

_մարդասիրության և գթասրտության,

_երեխայի հանդեպ սիրո և հարգանքի,

_ընտանեկան փոխհարաբերություններ կառուցելիս լավատեսություն,

_երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատման,

_երեխայի ներկայացվող պահանջների միասնականության,

_ծնողների հեղինակության անսասանության,նրանց կարծիքի գերակայության,

_հետևողականության և պահանջկոտության,

_ երեխային ընտանիքի գործունեությանն ակտիվ ներգրավելու։

Ընտանեկան դաստիարակության կազմակերպումը վերընշված սկզբունքներով նպաստում է սեփական ուժերի մեջ վստահ,ազատ և ակտիվ երեխայի ներդաշնակ զարգացմանը,այնպիսի անձնային հատկությունների ձեռքբերմանը,որոնք օգնում են նրան կառուցելու իր վաղվա օրը, արժանապատիվ ապագան։

1.2 Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

<<Երեխայի ուսուցման նպատակն է այնպես անել ,որ նա ընդունակ լինի շարունակելու իր զարգացումն առանց ուսուցչի օգնության>>։ Էլբերտ Հաբարտ

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է:Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում.Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոններով, նոր առօրյայով:Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը:

Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը: Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի,հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով,սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին,աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն:

Մանկապարտեզի ընտրության ժամանակ ծնողները պարտադիր պետք է ուշադրություն դարձնեն՝

- •Ինչպիսի՞ դաստիարակներ և դաստիարակի օգնականներ են զբաղվում երեխայի խնամքով և դաստիարակությամբ:
- Ի՞նչ մեթոդով են իրականացվում երեխայի զարգացման ծրագրերը:
- Արդյո՞ք երեխան սիրում է դաստիարակին և դաստիարակի օգնականին:Հաճույքո՞վ է հաճախում, թե՞ պարտադրված:
- Արդյո՞ք երեխան ճնշման չի ենթարկվում հասակակիցների և մեծահասակների կողմից:
- Որքանո՞վ են Մանկապարտեզի պայմանները համապատասխանում սանիտարահիգիենիկ պահանջներին:
- Որքանո՞վ է Մանկապարտեզը երեխայի զարգացման համար նպաստավոր միջավայր ապահովում:

Յուրաքանչյուր երեխա ունի իր զարգացման տեմպը և ուրույն ոճը:

- Երեխաների առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս:

- Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը,մտածողությունը։
- Երեխան սովորում է իրերին ձեռք տալով,դրանք գործածելով,փորձարկելով և շփվելով։

Մանկապարտեզը ստեղծում է այնպիսի միջավայր, որը կնպաստի երեխայի զարգացմանը, իսկ դաստիարակը ստանձնում է խաղընկերոջ դերը։

Օրվա գործունեությունը պլանավորելիս՝ պետք է պլանավորել նաև խթանող, երեխաներին խրախուսող խաղեր։

Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա՝ ինչն է հասկանալի, ինչը՝ անհասկանալի նրանց։

Հիմնվելով դիտարկումների վրա՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ, որոնք կնպաստեն մտածելուն։ Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածություն է։ Մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուս ոլորտների առաջընթացին։ Կարևորագույն նախապայմանը խախտված է համարվում, երբ շեշտը դրվում է իմացական ոլորտի վրա՝ նվազեցնելու երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը։

Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան, անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին։ Երբ երեխաները զգում են,որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ,ավելի հետևողական են կատարում առաջադրանքը և սովորում են ավելին։

Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանկյունից.

Սոցիալական ազդեցություն

Մանկական հոգեբանների մեծ մասը միակարծիք են, և պնդում են, որ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալականացման

գործում։ Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում, երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում։ Եթե նա տանը սովորել է առաջին իսկ պահանջով ստանալ այն ինչ ուզում է, կամ իր ուզածին հասնել լացով,ապա նոր միջավայրում նա ստիպված է հարմարվել և ուրիշի կարծիքը հաշվի առնել ։ Երեխայի էմոցիոնալ դաշտում տեղի են ունենում փոփոխություններ։ Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտֆիլմների հերոսներին,ապա հիմա սկսում է կյանքի նոր փուլ,որտեղ ընկերներն իրական են։ Մանկապարտեզում կազմակերպվում են միջոցառումներ, նշվում են տարեդարձներ, կազմակերպվում են արշավներ, այցելում են թանգարաններ և այլն։ Երեխան սովորում է արձագանքել իրադարձություններին։ Սահմանվում է հստակ օրակարգ. փոքրիկը զբոսնում է, սնվում, խաղում, սովորում, քնում է օրվա հստակ ժամերին։ Ճիշտ սահմանած օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիոնալ զարգացման կարևոր դրույթներից մեկն է։ Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճիշտ կատարել, օրինակ՝ սեղանները սպասքադրել, դասավորել խաղալիքները, ինքնուրույն հանվել, հագնվել և այլն։ Նման պարզ հանձնարարություններ կատարելը զարգացնում է երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը։

Հոգեբանական ազդեցություն

Մանկապարտեզ հաճախելը դրական է ազդում նաև երեխայի հոգեկան զարգացման վրա։Ի տարբերություն տանը ծնողի, ընտանիքի անդամի կամ դայակի հսկողությամբ մեծանալուն՝ Մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

- Սոցիալական հմտությունները. նա սովորում է արդյունավետ հաղորդակցվել ուրիշ անհատների հետ,(ինչն էլ էականորեն տարբերվում է ընտանիքի անդամների հետ հարաբերություններից)։
- Թիմում աշխատելու հմտությունները։
- Ձեռք է բերում նոր գաղափարներ,մոտեցումներ։
- Ընդլայնում է աշխարհահայացքը։

Մանկապարտեզ հաճախելը ունի նաև մի շարք այլ առավելություններ։

- Կա հստակ սահմանված ռեժիմ։ Ինչքան ուզում է հետևողական լինի ծնողը տնային պայմաններում օրվա ռեժիմին հետևելը շատ ավելի բարդ է, երբեմն նույնիսկ՝անհնար։
- Երեխաների հետ զբաղվում է հատուկ նրանց հետ աշխատելու համար մասնագիտացված անձնակազմ, ինչը ոչ միշտ է հնարավոր ապահովել խնամակալի դեպքում։

Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ մանկապարտոզից հետո երեխաներն ավելի արագ և հեշտ են հարմարվում դպրոցին։ Այստեղ գլխավորը ոչ թե ձեռք բերած ուսումնական գիտելիքներն են, այլ կյանքի մի շարք հմտությունները, օրինակ՝ ռեժիմին սովոր լինելը, ուշադրության կենտրոնացումը, խմբով աշխատելը, սոցիալական հմտությունները և այլն։

1.3 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքում

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը։ Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության։ Կարևոր է, որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին։ Այդ համագործակցությունից շահում է թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛ տվյալ հաստատությունը։

Վաղ մանկության շրջանում երեխաներն իրենց ինքնուրույնությունը, անհատականությունը հաստատելու, ապահով, բարեկեցիկ կյանք ունենալու համար մեծապես կախված են լինում իրենց ընտանիքից։

Ծնողները երեխաների առաջին ուսուցիչներն են և առաջին օրինական ծառայողները։ Իսկ երեխաները հրաշալի ընդօրինակողներ են։ Այդ իսկ պատճառով ծնողները պետք է հետևեն իրենց ցանկացած քայլին, խոսքին և կատարյալ գործողություններին։ Բայց ընտանիքները շատ տարբեր են, և չենք կարող ակնկալել, որ բոլոր ընտանիքները նույն կենպ կմասնակցեն երեխայի կրթությանը, խնամքին, դաստիարակությանը, հնարավորինս շատ ժամանակ կհատկացնեն նրանց և կաջակցեն ամենափոքր հարցերում։

Այս պարագայում մեծ է մանկապարտեզի և պրոֆեսիոնալ մանկավարժի դերը։Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները։

Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար։ Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ, ավելի է միավորում նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը:

Գլուխ 2. Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը

"Լավ մանկապարտեզը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է ընտանեկան դաստիարակությունը"։ Բենջամին Սփոք

2.1 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.

- նախադպրոցական կրթական հաստատության ներքին գործողությունների հանդեպ բաց լինելու,
- նախադպրոցական կրթական հաստատության արտաքին գործողությունների հանդեպ բաց լինելու։

Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին։ Ծնողների մանկապարտեզի մանկավարժական գործընթացին։ Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մաննապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները։ Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով։ Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային և կրկնապատկում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը։ Նրանք հաճույքով և գերագույն հարգանքով են արձագանքում ծնողների մանկապարտեզի աշխատանքներին ակտիվ մասնակցության փաստը և հպարտանում են ծնողներով։ Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը։ Մանկապարտեզի դեպի ներս բաց լինելու սկզբունքը ենթադրում է մանկապարտեզի մանկավարժական գործընթացին նպաստող ներխուժող յուրաքանչյուր ներգործության ընկալում, ընդունում և կիրառում։

Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պատրաստ պիտի լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ: Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը տարածքի դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցների, մանկական ակումբների հետ: Ցանկալի է և չափազանց արդյունավետ մանկապարտեզի փոխադարձ կապը մշակութային հաստատությունների հետ(գրադարաններ, թատրոններ, թանգարաններ):

2.2 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակոտն իրենց երեխայի մասին:Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին իրենց ներդնումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները.

- Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները։
- Ծնողական ժողովներ.քննարկում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր։
- Ծնողական համաժողովներ. դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է։
- Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում։
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին.դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը։
- Գրքերի փոխանակումներ.սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները։
- Այցելություններ ընտանիք.
- Բաց դռների օրեր.
- Հարց ու պատասխանների ցերեկույթներ.
- Մանկավարժական հյուրասրահ.
- Գաղափարների տոնավաճառ.
- Վստահության հեռախոս.
- Բարի գործերի օրեր.
- Կլոր սեղան.
- Զրույցներ՝ անհատական և խմբային
- Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային.
- Անկետավորում.
- Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.
- Փառատոներ և տոնակատարություններ.
- Սպորտային միջոցառումներ.

- Ցերկույթներ.

Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց:



2.3 Ժողովների անցկացման ուղենիշներ

- Ճանաչելով ընտանիքներին՝ դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին:Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել գոհունակությունից մինչև թերահավատություն:

Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝ յուրաքանչյուր իրադրությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:

- Ժողովների մասին հայտարարությունից և ընդհանուր տեղեկատվությունից բացի՝ յուրաքանչյուր ծնողի՝ կոնկրետ տեղեկություններ հաղորդե՛ք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան: Ժամանակ հատկացրե՛ք ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը:

- Ստեղծեք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրություն առաջարկելով։ Ծնողների հետ քննարկե՛ք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները։

Բացատրե՛ք, թե ինչպե՞ս կարելի է հասնել դրանց։ Նշե՛ք անհրաժեշտ ռազմավարություններն ու պլանները։

Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել՝

- օգնել ծնողներին ՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի <<տարածքն>> է, Հաղորդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,
- շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,
- ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին։

Ծնողների գնալուց անմիջապես հետո՝

- անհրաժեշտ է գրի առնել ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը,
- եթե մանկավարժից պատասխան է ակնկալվում, ապա հարկավոր է պատասխանել՝ առանց հապաղելու,
- անպայման պետք է ապահովել հետադարձ կապը (հանձնարարականներ, այցելություն, երկտող ծնողներին...)։

Ոչ պաշտոնական գրառումներ

Մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ։ Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից ուղղված հմտությունների ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին։ Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն ձևով աջակցելու համար։ Ընտանիքի անդամները նույնպես կարող են

մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ։

Անհատական զրառումների գրքույկներ

Այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվությունը։ Ընտանիքները կարող են մանկավարժներին նախազգուշացնել հատուկ իրադարձությունների,ինչպես ,օրինակ, ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների և այցելությունների մասին։

Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթերը օգտակար է՝ ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով։ Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ամենօրյա դասացուցակը, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձը։

Առաջարկությունների տուփ

Ծնողներին առաջարկվքւմ է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով։ Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը։

2.4 Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության հիմնական ուղիները։

Նախադպրոցական հիմնարկներում նպատակահարմար է, որ գործեն <<Վստահության հեռախոս>>, <<Մանկավարժի հյուրասրահ>>, <<Գաղափարների տոնավաճառ>>։ Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում (ընդ որում, նրանք աշխատում են որոշակի օրերի և ժամերի ընթացքում, ասենք՝ ամեն ամսվա

առաջին շաբաթվա օրերից մեկը) նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում։

Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ <<Ամենահամերաշխ ընտանիքը>>։ Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները։

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն,

2. ծնողների ներգրավման բազմազան միջոցներ։

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա։ Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն։

Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել։

Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու ուսուցիչները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման։

Գլուխ 3. Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

3.1. Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

- Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործե՛ք բազմատեսակ ձևեր։

Ստեղծագործական և ճկուն մոտեցում ցուցաբերե՛ք։

- Ժողովները և հանդիպումները կազմակերպե՛ք ծնողների համար հարմար ժամերի։
- Թույլ տվեք, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը։
- Պահպանե՛ք սերտ կապ։

Հետևե՛ք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ զրուցի առնվազն շաբաթը մեկ անգամ։

- Փորձե՛ք ներգրավել ամբողջ ընտանիքին։

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից։ Ստեղծագործաբար որոնե՛ք տարբերակներ՝ հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար։

- Հենվե՛ք երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքե՛ք դրականորեն։
- Եղե՛ք համբերատար։ Պահպանե՛ք գաղտնիությունը։

3.2. Խորհուրդներ ծնողներին

Խոսե՛ք երեխայի հետ <<Մաթեմատիկայի լեզվով>>

- Ճաշի ընթացքում երեխայի հետ խոսեք այն մասին, որ նրա բաժակը լիքն է կամ դատարկ։ Առաջարկե՛ք նրան այսօրինակ հարցեր. << Ուզու՞մ ես այս ամբողջ կտորը տամ քեզ, թե՞ կեսը>>, <<Հացը եռանկյունաձև՞ պատրաստենք, թե՞ քառակուսի>>։

- Երեխային թո՛ւյլ տվեք մասնակցել չորացած լվացքը տեսակավորելու և գուլպաները զույգ-զույգ դասավորել։
- Երգե՛ք կամ ոտանավորներ ու շուտասելուկներ արտասանե՛ք երեխայի համար. <<Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, ձմերուկը բերե՛ք...>> :

- Երեխային հագցնելիս մեկ առ մեկ հաշվե՛ք նրա վերնաշապիկի կամ վերարկուի կոճակները։
- Երեխային թու՛յլ տվեք ձեզ օգնել սեղան պատրաստելիս։ Թող նա հաշվի այն մարդկանց քանակը, ովքեր պետք է ճաշեն։

Օգնե՛ք, որ նրա յուրաքանչյուրի համար դնի դանակ, պատառաքաղ, գդալ և անձեռոցիկ։

3.3. Դիտողական նյութեր ծնողների համար

1. Տեղեկատվական վահանակ.

-օրվա կարգացուցակը(ռեժիմ)

-պարապմունքների ցանկ(փոխում ենք նյութը),

-թարմ գրականություն՝ համառոտ ծանոթագրություններով։

2. <<Բարև ձեզ, ես եկա>>.

-երեխաների լուսանկարներով վահանակ (ծանոթություն երեխաների հետ, քանակական և դասական հաշիվ, ծանոթություն թվերի հետ և գիտելիքների ամրապնդում. թվերը գտնվում են թվադարանի գրպաններում, երեխաները դրանք դնում են իրենց լուսանկարների տակ)։

3. <<Տնային աշխատանք>>, <<Ինչո՞ց են այսօր երեխաները զբաղվել>> և այլ վահանակներ։

4. <<Մեր պարապմունքները>>, <<Մեր խաղերը>>, <<Մեր տոները>> վահանակներ։

Կարելի է բոլոր նյութերը միավորել 1-2 վահանակների վրա։

3.4. Ծնողների հետ խորհրդակցությունների մոտավոր թեմատիկա

(1 տարվա)

1. Հարմարեցում (ադապտացիա) նոր պայմաններին։

2. Շփում մեծահասակների հետ. ինչպե՞ս է այն զարգացնում երեխաների անձը։

3. Ռեժիմը և նրա նշանակությունը երեխաների կյանքում։

4. Ինչպե՞ս նախապատրաստվել երեխային մանկապարտեզ հաճախելուն։

5. Մանկական տոների, տանը ազատ ժամանակի կազմակերպումը։

6. Նախադպրոցականի ճիշտ սնուցումը։

7. Կերպարվեստային ստեղծագործականությունը։

8.Տանը և մանկապարտեզում երեխայի դաստիարակության ընդհանրությունը (ընդհանուր տողը)։

9. Դպրոցում ուսումնառության հոգեբանական նախապատրաստումը։

10. Երեխաների առողջության ամրապնդման համար պայմաններ ստեղծելու մասին։

Եզրակացություն

Ամփոփելով հետազոտական այս աշխատանքը՝ գանք մի շարք եզրահանգումների՝

- Ուսումնասիրելով համապատասխան գրականությունը՝ պարզեցինք, որ մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օրինական ներկայացուցիչների) համագործակցությունը չափազանց կարևոր դերակատարում ունի մանկապարտեզում կրթական աշխատանքների գրագետ կազմակերպման համար, պարզեցինք նաև, թե որքան մեծ դեր է խաղում մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը՝ ընտանեկան դաստիարակության գործում, որը ամուր հիմքեր է ստեղծում երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար։
- Ուսումնասիրելով և մշակելով մանկավարժական աշխատողի և սաների ծնողներից (նրանց օրինական ներկայացուցիչների) համագործակցության տարբեր ձևերը, պարզեցինք, որ դրանք կարող են լավագույնս նպաստել փոխվստահության ձևավորմանը, օգնում են միասին պլանավորել երեխաների կրթադաստիարակչական աշխատանքները։
- Ուսումնասիրելով մանկապարտեզ-ընտանիք հարաբերությունների և համագործակցության մասին պարզեցինք, որ ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից։ Ընտանիք-մանկապարտեզ արդյունավետ համագործակցությունը մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը և կարևոր նախապայմաններից է երեխայի լիարժեք զարգացման համար։

Գալով ամփոփ եզրակացության, նշենք, որ միայն ճիշտ և գրագետ համագործակցության միջոցով, ինչպես նաև փոխվստահությամբ կարող ենք նպաստել երեխաների կրթական և դաստիարակչական մի շարք հարցերի լուծմանը։

Գրականության ցանկ

1. Ս. Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> բուհական դասագիրք, Երևան 2008թ.

2. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ>> մանկապարտեզների համար, Երևան 2010թ.

3. Մանկապարտեզի Միջին Խմբի Կրթական Համալիր Ծրագիր, Երևան 2011թ.

4.Ա. Հովհաննիսյան, Մ. Սարգսյան <<Աշխատանքի կազմակերպումը նախադպրոցական հաստատությունների կարճաժամկետ խմբերում>>, Երևան 2008թ.

5. <<Քայլ առ քայլ>> Հիմնադրամ

6.Լ. Սմբատյան <<Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում>>, Երևան 2014թ.